



EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

ԵՐՐՈՐԴ ԲԱԺԱՆՍՈՒՆՔ

ԹՈՒՆՅԱՆԸ ԵՎ ԱՅԼՔ ԸՆԴԴԵՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(զանգատ թիվ 22812/05)

ՎՃԻՌ

ՍՏԴԱՍԲՈՒՐԳ

9 հոկտեմբերի 2012թ.

ՎԵՐՋՆԱԿԱՆ

11/02/2013

*Սույն վճիռը վերջնական է դարձել Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետի
համաձայն: Այն կարող է ենթարկվել խմբագրական փոփոխությունների:*



Թունյանը եւ այլք ընդդեմ Հայաստանի գործով,

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (Երրորդ բաժանմունք),
հանդես գալով Պալատի հետեւյալ կազմով՝

Ջուսեփ Կասադելլայ [Josep Casadevall]՝ *Նախագահ,*

Էլսբերտ Մայեր [Egbert Myjer],

Կորնելիու Բիրսան [Corneliu Bîrsan],

Ալվինա Գյուլումյան [Alvina Gyulumyan],

Յան Շիկուտա [Ján Šikuta],

Լուիս Լոպես Գեռա [Luis López Guerra],

Քրիստինա Պարդալոս [Kristina Pardalos]՝ *դատավորներ,*

եւ Սանտիագո Քեսադա [Santiago Quesada]՝ *Բաժանմունքի քարտուղար,*

2012 թվականի սեպտեմբերի 18-ին անցկացնելով դռնփակ
խորհրդակցություն,

կայացրեց հետեւյալ վճիռը, որն ընդունվեց նույն օրը.

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

1. Սույն գործը հարուցվել է «Մարդու իրավունքների եւ հիմնարար
ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի (Կոնվենցիա) 34-րդ
հոդվածի համաձայն Հայաստանի Հանրապետության չորս քաղաքացիներ
տկն Էմմա Թունյանի, պրն Սաշիկ Սաֆյանի, պրն Գեուրգ Սաֆյանի եւ
պրն Միհրան Սաֆյանի (ղիմումատուներ) կողմից ընդդեմ Հայաստանի
Հանրապետության՝ 2005 թվականի հունիսի 15-ին Դատարան ներկայացված
գանգատի (թիվ 22812/05) հիման վրա:

2. Դիմումատուներին ներկայացրել է Երեւանում գործող իրավաբան պրն Վ. Գրիգորյանը: Հայաստանի Հանրապետության կառավարությունը (Կառավարություն) ներկայացրել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր ներկայացուցիչ պրն Գ. Կոստանյանը:

3. 2007 թվականի հունիսի 20-ին գանգատն ուղարկվել է Կառավարություն: Որոշվել է նաեւ միեւնույն ժամանակ ուսումնասիրել գանգատի ընդունելիության եւ ըստ էության քննության հարցերը (29-րդ հոդվածի 1-ին կետ):

ՓԱՍՏԵՐԸ

I. ԳՈՐԾԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

4. Դիմումատուները ծնվել են, համապատասխանաբար, 1945, 1940, 1974 եւ 1976 թվականներին եւ ապրում են Երեւանում:

5. Տկն Էմմա Թունյանին (այսուհետ՝ առաջին դիմումատու) պատկանել է բնակարան, որն ունեցել է 89,25 քառակուսի մետր մակերես եւ գտնվել է ք. Երեւան, Բյուզանդի փող. 9 հասցեում: Բնակարանը տեղակայված է եղել առաջին դիմումատուի կողմից վարձակալված՝ 240 քառակուսի մետր մակերեսով հողակտորի վրա գտնվող տան մեջ: Դիմումատուները պնդել են, որ պրն Սաշիկ Սաֆյանը, պրն Գեորգ Սաֆյանը եւ պրն Միհրան Սաֆյանը (այսուհետ՝ երկրորդ, երրորդ եւ չորրորդ դիմումատուներ)՝ առաջին դիմումատուի ամուսինը եւ երկու որդիները, օգտվել են այդ տան նկատմամբ օգտագործման իրավունքից, մինչդեռ Կառավարությունը վիճարկել է այդ փաստը եւ պնդել, որ նրանք չեն օգտվել տան նկատմամբ օգտագործման իրավունքից, այլ պարզապես ունեցել են այդ տանը բնակվելու իրավունք:

6. 2002 թվականի օգոստոսի 1-ին Կառավարությունն ընդունել է թիվ 1151-Ն որոշումը, որով հաստատվել են կառուցապատման ծրագրեր իրականացնելու նպատակով Երեւան [քաղաքի] Կենտրոն համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ պետության կարիքների համար վերցվող անշարժ գույքի (հողակտորներ, շենքեր եւ շինություններ) օտարման գոտիները՝ 345 000 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով: Բյուզանդի փողոցը ներառված է եղել այդ օտարման գոտիներում գտնվող փողոցների ցանկում:

7. 2004 թվականի հունիսի 17-ին Կառավարությունն ընդունել է թիվ 909-Ն որոշումը, որով թույլատրվել է Բյուզանդի փողոցի հատվածներից մեկի մասով, որը վերանվանվելու էր Գլխավոր պողոտա, կառուցապատման իրավունքի պայմանագիր կնքել մասնավոր ընկերության՝ «Գլենդել Հիլզ» ՓԲԸ-ի հետ:

8. 2004 թվականի հուլիսի 28-ին «Գլենդել Հիլզ» ՓԲԸ-ն եւ Երեւանի քաղաքապետարանը կնքել են համաձայնագիր, որով, *inter alia* (ի թիվս այլնի), «Գլենդել Հիլզ» ՓԲԸ-ին վերապահվել է օտարման ենթակա գույքի սեփականատերերի հետ անմիջականորեն բանակցելու իրավունք, իսկ այդ բանակցությունների ձախողման դեպքում՝ պետության անունից դատական հայց ներկայացնելու իրավունք՝ այդ գույքի հարկադիր օտարման պահանջով:

9. 2004 թվականի օգոստոսի 25-ին «Գլենդել Հիլզ» ՓԲԸ-ն տեղեկացրել է դիմումատուներին, որ բնակարանը եւ վարձակալված հողակտորը գնահատման լիցենզավորված կազմակերպության կողմից գնահատվել է 34 200 ԱՄՆ դոլար, եւ առաջին դիմումատուին՝ որպես սեփականատիրոջ, առաջարկել է ազգային արժույթով արտահայտված համարժեք գումար՝ որպես փոխհատուցում: Նրան առաջարկվել է հավելյալ 28 600 ԱՄՆ դոլարի չափով գումար՝ որպես ֆինանսական խրախուսանք, եթե նա համաձայնեք կնքել համաձայնագիր եւ հաջորդող հինգ օրվա ընթացքում հանձնել անշարժ գույքը: Մյուս դիմումատուներից յուրաքանչյուրին առաջարկվել է 2 000 ԱՄՆ դոլարի չափով գումար՝ որպես փոխհատուցում, եւ 1 500 ԱՄՆ դոլարի չափով գումար՝ որպես ֆինանսական խրախուսանք:

10. Պարզվում է, որ դիմումատուները չեն ընդունել առաջարկը՝ բավարարված չլինելով առաջարկվող փոխհատուցման գումարի չափով:

11. 2004 թվականի սեպտեմբերի 23-ին «Գլենդել Հիլզ» ՓԲԸ-ն դիմումատուների դեմ պետության անունից հայց է ներկայացրել՝ պահանջելով հարկադրել նրանց կնքել իրենց գույքը պետության կարիքների համար օտարելու մասին պայմանագիր եւ վտարել նրանց:

12. 2004 թվականի հոկտեմբերի 18-ին առաջին դիմումատուն ներկայացրել է հակընդդեմ հայց, որով վիճարկել է Կառավարության թիվ 1151-Ն որոշման սահմանադրականությունը: Նա նշել է, *inter alia*, որ այդ որոշումը հակասում է Սահմանադրության 28-րդ հոդվածին, համաձայն որի՝ գույքը կարող է օտարվել միայն տվյալ գույքի մասին օրենքի ընդունմամբ: Նա այնուհետեւ նշել է, որ նույն հոդվածի համաձայն՝ Կառավարությունն իրավասու չէ որոշում կայացնել գույքի օտարման մասին:

13. 2004 թվականի հոկտեմբերի 26-ին Երեւան [քաղաքի] Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների դատարանը բավարարել է «Գլենդել Հիլզ» ՓԲԸ-ի հայցը եւ մերժել է առաջին դիմումատուի հակընդդեմ հայցը՝ դիմումատուներին կարգադրելով կնքել առաջարկվող համաձայնագրերը եւ նրանց վտարելով: Համայնքային դատարանը, *inter alia*, նշել է, որ այն իրավասու չի եղել որոշում կայացնել Կառավարության թիվ 1151-Ն որոշման սահմանադրականության վերաբերյալ:

14. 2004 թվականի նոյեմբերի 9-ին դիմումատուները վերաքննիչ բողոք են ներկայացրել:

15. 2005 թվականի մարտի 1-ին Վերաքննիչ քաղաքացիական դատարանը բավարարել է «Գլենդել Հիլզ» ՓԲԸ-ի հայցը: Վերաքննիչ դատարանն այնուհետեւ դադարեցրել է առաջին դիմումատուի հակընդդեմ հայցով վարույթը, քանի որ այն իրավասու չի եղել որոշում կայացնել Կառավարության որոշումների սահմանադրականության վերաբերյալ: Այն նաեւ կարգադրել է, որ դիմումատուները վճարեն դատական տուրքերը՝ 4 000 եւ 10 000 ՀՀ դրամ գումարի չափով:

16. 2005 թվականի մարտի 14-ին դիմումատուները վճարել են բողոք են ներկայացրել: 2005 թվականի ապրիլի 1-ին նրանք ներկայացրել են իրենց վճարել բողոքի լրացուցիչ փաստարկները:

17. 2005 թվականի ապրիլի 14-ին Վճարել դատարանը մերժել է դիմումատուների վճարել բողոքը:

18. 2005 թվականի ապրիլի 29-ին հարկադիր կատարողը հարուցել է կատարողական վարույթ եւ դիմումատուներին կարգադրել է կատարել վճիռը: 2005 թվականի մայիսի 12-ին դիմումատուները, որոնք ակնհայտորեն հրաժարվել են վճիռը կամավոր կատարել, հարկադրաբար վտարվել են իրենց տնից:

II. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

19. Ներպետական օրենսդրության համապատասխան դրույթների համառոտ նկարագրությանը ծանոթանալու համար տե՛ս *Մինասյանը եւ Սեմերջյանն ընդդեմ Հայաստանի* [*Minasyan and Semerjyan v. Armenia*] (թիվ 27651/05, §§ 23-43, 2009 թվականի հունիսի 23) գործով վճիռը:

ԻՐԱՎՈՒՆՔԸ

I. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԹԻՎ 1 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ 1-ԻՆ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

20. Դիմումատուները բողոքել են, որ իրենց գույքից զրկելու հետեւանքով խախտվել են Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով նախատեսված երաշխիքները, համաձայն որի՝

«Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի զրկել իր գույքից, բացառությամբ ի շահ հանրության եւ այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով:

Նախորդ դրույթները, այնուամենայնիվ, չեն խոչընդոտում պետության՝ այնպիսի օրենքներ կիրառելու իրավունքը, որոնք նա անհրաժեշտ է համարում ընդհանուր շահերին համապատասխան, սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կամ հարկերի կամ մյուս գանձումների կամ տուգանքների վճարումն ապահովելու համար:»:

Ա. Ընդունելիությունը

1. Կառավարության պահանջը՝ գանգատը գործերի ցուցակից հանելու մասին

21. Բարեկամական կարգավորմանն ուղղված անարդյունավետ բանակցություններից հետո Կառավարությունը 2008 թվականի դեկտեմբերի 9-ի գրությամբ Դատարանին տեղեկացրել է, որ այն առաջարկում է միակողմանի հայտարարություն անել՝ գանգատի շրջանակներում ներկայացված խնդրի լուծման նպատակով, մասնավորապես՝ առաջարկելով դիմումատուներին տրամադրել 116 քառակուսի մետր մակերեսով վերանորոգված բնակարան մի շենքում, որի շինարարական աշխատանքներն ավարտվելու էին 2010 թվականին, եւ որը գտնվում էր Երեւան [քաղաքի] Կենտրոն համայնքի սահմաններում, ինչպես նաեւ նրանց տրամադրել որոշակի գումար: Այնուհետեւ այն Դատարանից պահանջել է գանգատը հանել գործերի ցուցակից՝ Կոնվենցիայի 37-րդ հոդվածին համապատասխան:

22. Զթվագրված գրությամբ դիմումատուներն առարկել են Կառավարության հայտարարությանը: Նրանք նշել են, որ, նախեւառաջ, իրենց գործով բարձրացվել են այնպիսի հարցեր, որոնց վերաբերյալ Դատարանը նախկինում որոշում չի կայացրել: Երկրորդ, կողմերի միջեւ եղել է անհամաձայնություն գործի փաստական հանգամանքների, մասնավորապես՝ իրենց գույքի շրջանակի

վերաբերյալ: Երրորդ, Կառավարության կողմից առաջարկված փոխհատուցումը եղել է ոչ համարժեք եւ անբավարար: Այն համաչափ չի եղել օտարված գույքի չափին եւ գտնվելու վայրին, եւ դրանով հաշվի չի առնվել հողակտորից *de facto* (փաստացի) զրկվելու հանգամանքը: Ավելին, առաջարկում բացակայել են այնպիսի մանրամասներ, ինչպիսին է կոնկրետ հասցեն: Այն նաեւ ներառել է իրականացման երկարատեւ ժամկետ եւ վարձակալության վճարի կամայական հաշվարկ:

23. Դատարանն ի սկզբանե դիտարկում է, որ կողմերը չեն կարողացել համաձայնության գալ գործի բարեկամական կարգավորման պայմանների շուրջ: Այն վերահաստատում է, որ Կոնվենցիայի 38-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան, բարեկամական կարգավորմանն ուղղված բանակցությունները խորհրդապահական են, եւ որ Դատարանի կանոնակարգի 62-րդ կանոնի 2-րդ կետով նաեւ սահմանվում է, որ բարեկամական կարգավորումն ապահովելու փորձի շրջանակներում տեղի ունեցած ոչ մի գրավոր կամ բանավոր հաղորդակցության եւ կատարված ոչ մի առաջարկի կամ համաձայնության չի կարելի հղում կատարել կամ դրանց վրա չի կարելի հիմնվել հայցային վարույթի շրջանակներում (տե՛ս *Մերիակրին ընդդեմ Մոլդովայի* (գործերի ցուցակից հանելը) [*Meriakri v. Moldova* (striking out)], թիվ 53487/99, § 28, 2005 թվականի մարտի 1): Հետեւաբար, Դատարանը կգործի Կառավարության միակողմանի հայտարարության եւ կողմերի՝ բարեկամական կարգավորմանն ուղղված բանակցությունների շրջանակից դուրս ներկայացրած դիտարկումների հիման վրա եւ կանտեսի կողմերի՝ գործի բարեկամական կարգավորման հնարավորությունների ուսումնասիրության համատեքստում արված պնդումներն ու այն պատճառները, թե ինչու կողմերը չեն կարողացել համաձայնության գալ բարեկամական կարգավորման պայմանների շուրջ (տե՛ս *Բսթեյթ օֆ Նիցշկեն ընդդեմ Շվեդիայի* [*Estate of Nitschke v. Sweden*], թիվ 6301/05, § 36, 2007 թվականի սեպտեմբերի 27):

24. Դատարանը նշում է, որ Կոնվենցիայի 37-րդ հոդվածով նախատեսվում է, որ այն կարող է վարույթի ցանկացած փուլում որոշում կայացնել գանգատը գործերի

ցուցակից հանելու մասին, եթե հանգամանքները հանգեցնում են այդ հոդվածի 1-ին կետի «ա», «բ» եւ «գ» ենթակետերում նշված եզրակացություններից մեկին: 37-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետով Դատարանին հնարավորություն է տրվում, մասնավորապես, գործը հանել գործերի ցուցակից, եթե՝

«Դատարանի կողմից հիմք ընդունված որեւէ այլ պատճառով զանգասի քննությունը շարունակելն այլեւս արդարացված չէ:»:

25. Դատարանը նաեւ նշում է, որ որոշակի հանգամանքներում այն, 37-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի համաձայն, կարող է զանգասը հանել գործերի ցուցակից՝ պատասխանող կառավարության միակողմանի հայտարարության հիման վրա, նույնիսկ, եթե դիմումատուները ցանկություն են հայտնում, որ գործի քննությունը շարունակվի:

26. Այդ նպատակով տվյալ հայտարարությունը զգուշավորությամբ քննության կառնվի Դատարանի կողմից՝ դրա նախադեպային իրավունքից, մասնավորապես՝ *Թահշին Ակարի* [*Tahsin Acar*] գործով վճռից բխող սկզբունքների լույսի ներքո (տե՛ս *Թահշին Ակարն ընդդեմ Թուրքիայի* [ՄՊ] [*Tahsin Acar v. Turkey* [GC]], թիվ 26307/95, §§ 75-77, ՄԻԵԴ 2003-VI, նաեւ *ՎԱԶԱ Սփուլկա գ. օ.օ.-ն ընդդեմ Լեհաստանի* (որոշում) [*WAZA Spółka z o.o. v. Poland* (dec.)], թիվ 11602/02, 2007 թվականի հունիսի 26, եւ *Սուլվինսկան ընդդեմ Լեհաստանի* (որոշում) [*Sulwińska v. Poland* (dec.)], թիվ 28953/03): Այնուամենայնիվ, Դատարանն անհրաժեշտ չի համարում որոշում կայացնել՝ տվյալ խնդրի մասով կողմերի փաստարկների ամբողջականության վերաբերյալ՝ հետեւյալ պատճառով:

27. Դատարանը, անդրադառնալով առաջարկվող փոխհատուցման բնույթին, նշում է, որ Կառավարությունն առաջարկել է՝ դիմումատուներին ապահովել նոր բնակարանով եւ որոշակի գումարով: Դատարանը, այնուամենայնիվ, համոզված չէ, որ դա ընդունելի առաջարկ է, քանի որ Կառավարությունը չի տրամադրել բավարար մանրամասներ տվյալ բնակարանի վերաբերյալ (նույնանման իրավիճակի համար տե՛ս *Եդիգարյանն ընդդեմ Հայաստանի* (որոշում) [*Yedigaryan v. Armenia* (dec.)], թիվ 10446/05, § 35,

2011 թվականի նոյեմբերի 15, եւ *Երանոսյանն ընդդեմ Հայաստանի* (որոշում) [*Yeranosyan v. Armenia* (dec.)], թիվ 3309/06, § 24, 2011 թվականի նոյեմբերի 15): Կառավարությունը ո՛չ հստակեցրել է դրա գտնվելու ճշգրիտ վայրն ու հասցեն, ո՛չ էլ տրամադրել է որեւէ հիմնավորող փաստաթուղթ (տե՛ս, ի հակադրություն դրան՝ *Ղարիբյանը եւ այլք ընդդեմ Հայաստանի* (որոշում) [*Gharibyan and Others v. Armenia* (dec.)], թիվ 19940/05, § 22, 2011 թվականի նոյեմբերի 15, *Ղասաբյանը եւ այլք ընդդեմ Հայաստանի* (որոշում) [*Ghasabyan and Others v. Armenia* (dec.)], թիվ 23566/05, § 21, 2011 թվականի նոյեմբերի 15, եւ *Բաղդասարյանը եւ Ջարիկյանցն ընդդեմ Հայաստանի* (որոշում) [*Baghdasaryan and Zarikyants v. Armenia* (dec.)], թիվ 43242/05, § 21, 2011 թվականի նոյեմբերի 15):

28. Հետեւաբար, Դատարանը մերժում է Կոնվենցիայի 37-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի հիման վրա գանգատը գործերի ցուցակից հանելու մասին Կառավարության պահանջը:

2. *Ղիմումատուներ Սաշիկ Սաֆյանի, Գեւորգ Սաֆյանի եւ Միհրան Սաֆյանի՝ տուժողի կարգավիճակը*

29. Կառավարությունը պնդել է, որ ղիմումատուներ Սաշիկ Սաֆյանը, Գեւորգ Սաֆյանը եւ Միհրան Սաֆյանը չէին կարող հավակնել՝ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի ենթադրյալ խախտման գոհեր լինելուն, քանի որ նրանք այդ դրույթի իմաստով չեն ունեցել որեւէ «գույք»: Մասնավորապես, ղիմումատուներ Սաշիկ Սաֆյանը, Գեւորգ Սաֆյանը եւ Միհրան Սաֆյանն առաջին ղիմումատուին պատկանող տան նկատմամբ չեն ունեցել որեւէ գույքային իրավունք, այդ թվում՝ բնակելի տարածության օգտագործման իրավունք: Քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդվածի համաձայն՝ վերջին իրավունքը կարող էր ծագել միայն դրա պետական գրանցման պահից: Այնուամենայնիվ, առկա չի եղել որեւէ այնպիսի ապացույց, որով հնարավոր կլիներ հիմնավորել, որ ղիմումատուներ Սաշիկ Սաֆյանը, Գեւորգ Սաֆյանը եւ Միհրան Սաֆյանն ունեցել են Անշարժ գույքի կադաստրում գրանցված այդպիսի իրավունք: Այդպիսով, միակ

իրավունքը, որից նրանք օգտվել են, եղել է տվյալ տանը բնակվելու իրավունքը՝ Ընտանեկան օրենսգրքի 47-րդ հոդվածի եւ «Երեխայի իրավունքների մասին» [ՀՀ] օրենքի 16-րդ հոդվածի համաձայն: Այնուամենայնիվ, այդ իրավունքը չի կարող համարվել «գույք»՝ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի իմաստով:

30. Դիմումատուներ Սաշիկ Սաֆյանը, Գեւորգ Սաֆյանը եւ Միհրան Սաֆյանը պնդել են, որ նրանք առաջին դիմումատուին պատկանող տան նկատմամբ ունեցել են բնակելի տարածության օգտագործման իրավունք: Հայաստանում գործել է Վերաքննիչ եւ Վճռաբեկ դատարանների՝ հստակ ձեւավորված նախադեպային իրավունք, որով Բնակարանային օրենսգրքի 54-րդ եւ 120-րդ հոդվածների համաձայն՝ բնակելի տարածության օգտագործման իրավունքը ճանաչվում է երեք գործոնների հիման վրա՝ 1) բնակելի տարածության սեփականատիրոջ ընտանիքի անդամ լինելը, 2) այդ բնակելի տարածությունում բնակվելը, եւ 3) սեփականատիրոջ հետ ընդհանուր տնտեսություն վարելը: Նրանց պարագայում այս երեք գործոններն էլ առկա են եղել:

31. Ընդունելով այն հանգամանքը, որ բնակելի տարածության օգտագործման իրենց իրավունքը գրանցված չի եղել Անշարժ գույքի կադաստրում՝ դիմումատուները պնդել են, որ այդ իրավունքը գործել է նույնիսկ առանց պետական գրանցման, քանի որ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» [ՀՀ] օրենքի 41-րդ հոդվածի համաձայն՝ գույքի նկատմամբ ամուսինների, երեխաների եւ խնամքի տակ գտնվող այլ անձանց իրավունքները, որոնք սահմանված են օրենսդրությամբ, գործում են նույնիսկ առանց այդպիսի գրանցման: Ամեն դեպքում, նրանք հնարավորություն չեն ունեցել գրանցելու այդ իրավունքը՝ չնայած ցանկացել են, քանի որ Կառավարության թիվ 1151-Ն որոշմամբ տվյալ տան նկատմամբ սահմանվել են այնպիսի սահմանափակումներ, որոնցով կանխվել է Անշարժ գույքի կադաստրում դրա նկատմամբ որեւէ գործարք գրանցելը:

32. Դիմումատուները, ի վերջո, պնդել են, որ բնակելի տարածության օգտագործման իրենց իրավունքը հաստատվել է նաեւ այն փաստով, որ հայցվորը

ձգտել է դրամական փոխհատուցում վճարելու միջոցով դադարեցնել տան նկատմամբ իրենց իրավունքները՝ դիմելով դատարաններ, եւ դատարանները տրամադրել են այդպիսի փոխհատուցում:

33. Դատարանի նկատառումով դիմումատուներ Սաշիկ Սաֆյանը, Գեորգ Սաֆյանը եւ Միհրան Սաֆյանը որպէս հայցվորներ ներգրավված են եղել՝ բնակարանի նկատմամբ սեփականության իրավունքի դադարեցմանն ուղղված դատական վարույթում: Ավելին, ներպետական դատարաններն այդպիսի դադարեցում կարգադրելիս հստակորեն անդրադարձել են այս դիմումատուներին եւ նրանց տրամադրել փոխհատուցում, որը նույնական է եղել նմանատիպ այլ գործերում օգտագործման իրավունք ունեցող անձանց տրամադրվող փոխհատուցման հետ (տե՛ս վերելում հիշատակված՝ *Մինասյանի եւ Սեմերջյանի գործը*, § 16, ինչպէս նաեւ *Հովհաննիսյանը եւ Շիրոյանն ընդեմ Հայաստանի* (արդարացի փոխհատուցում) [*Hovhannisyan and Shiroyan v. Armenia* (just satisfaction)], թիվ 5065/06, § 14, 2011 թվականի նոյեմբերի 15): Այսպիսով, նրանց կողմից գույքային իրավունքի օգտագործումը, տվյալ դեպքում՝ բնակելի տարածության օգտագործման իրավունքը, ճանաչվել է ներպետական դատարանների կողմից, որոնք որոշել են փոխհատուցում տրամադրել այդ իրավունքի դադարման դիմաց: Դրանից հետեւում է, որ Կառավարության պնդումները հակառակի մասին հիմնված չեն ներպետական դատարանների եզրակացությունների վրա: Դատարանն այդ առնչությամբ վերահաստատում է, որ բնակելի տարածության օգտագործման իրավունքն այն արդեն իսկ ճանաչել է որպէս «գույք»՝ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի իմաստով (տե՛ս վերելում հիշատակված՝ *Մինասյանի եւ Սեմերջյանի գործը*, § 56): Հետեւաբար, Կառավարության առարկությունը պետք է մերժվի:

3. Եզրակացություն

34. Դատարանը նշում է, որ այս բողոքը, Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետի իմաստով, ակնհայտ անհիմն չէ: Դատարանն այնուհետեւ նշում է, որ այն անընդունելի չէ որեւէ այլ հիմքով: Հետեւաբար, այն պետք է

հայտարարվի ընդունելի:

Բ. Ըստ էության քննությունը

35. Դիմումատուները պնդել են, որ իրենց պատկանող գույքից իրենց զրկելը չի կատարվել օրենքով նախատեսված պայմանների համաձայն, քանի որ դա կատարվել է Սահմանադրության 28-րդ հոդվածով նախատեսված երաշխիքների խախտմամբ:

36. Կառավարությունը պնդել է, որ Սահմանադրության 28-րդ հոդվածը կիրառելի չի եղել դիմումատուների գործի նկատմամբ:

37. Դատարանը վերահաստատում է, որ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի առաջին եւ ամենակարեւոր պահանջն այն է, որ սեփական գույքից անարգել օգտվելու հարցում պետական մարմնի ցանկացած միջամտություն պետք է լինի օրինական. առաջին պարբերության երկրորդ նախադասությամբ թույլատրվում է գույքից զրկել միայն «օրենքով ... նախատեսված պայմաններով», իսկ երկրորդ պարբերությամբ ճանաչվում է, որ պետություններն իրավասու են վերահսկելու գույքի օգտագործումն «օրենքների» գործադրման միջոցով: Ավելին, իրավունքի գերակայությունը՝ ժողովրդավարական հասարակության հիմնարար սկզբունքներից մեկը, արտացոլված է Կոնվենցիայի բոլոր հոդվածներում (տե՛ս *Հունաստանի նախկին թագավորը եւ այլք ընդդեմ Հունաստանի* [ՄՊ] [*Former King of Greece and Others v. Greece* [GC]], թիվ 25701/94, § 79, ՄԻԵԴ 2000-XII): Դատարանն այնուհետեւ վերահաստատում է, որ «օրենքով նախատեսված պայմանների համաձայն» արտահայտությամբ, առաջին հերթին, պահանջվում է համարժեքորեն մատչելի եւ բավականաչափ հստակ ներպետական իրավական դրույթների առկայություն եւ դրանց պահպանում (տե՛ս *Լիթգոուն եւ այլք ընդդեմ Միացյալ Թագավորության* [*Lithgow and Others v. the United Kingdom*], 1986 թվականի հուլիսի 8, § 110, շարք Ա, թիվ 102):

38. Դատարանը նշում է, որ այն արդեն քննել է համանման բողոքներ եւ

փաստարկներ Հայաստանի դեմ հարուցված մեկ այլ գործում, եւ եզրակացրել է, որ գույքից զրկելը եւ օգտագործման իրավունքը դադարեցնելը չեն կատարվել «օրենքով նախատեսված պայմանների համաձայն» (տե՛ս վերելում հիշատակված՝ *Մինասյանի եւ Սեմերջյանի գործը*, §§ 69-77): Սույն գործով այդ եզրահանգումից շեղում կատարելու համար Դատարանը որեւէ պատճառ չի տեսնում:

39. Համապատասխանաբար, տեղի է ունեցել Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում:

II. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ՄՅՈՒՍ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ

40. Դիմումատուները նաեւ բարձրացրել են մի շարք բողոքներ՝ Կոնվենցիայի 6-րդ եւ 8-րդ հոդվածների մասով:

41. Հաշվի առնելով իր տրամադրության տակ գտնվող բոլոր նյութերը եւ այնքանով, որքանով այդ բողոքներն իր իրավասության շրջանակներում են, Դատարանը գտնում է, որ դրանցով չի բացահայտվում՝ Կոնվենցիայով կամ դրան կից արձանագրություններով սահմանված իրավունքների եւ ազատությունների խախտման որեւէ հատկանիշ: Հետեւաբար, գանգատի սույն մասը պետք է մերժվի ակնհայտ անհիմն լինելու պատճառով՝ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ եւ 4-րդ կետերի համաձայն:

III. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 41-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

42. Կոնվենցիայի 41-րդ հոդվածի համաձայն՝

«Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի

ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել:»:

Ա. Վնասը

43. Նյութական վնասի դիմաց առաջին դիմումատուն պահանջել է 4 401 440 եվրո՝ որպես օտարված գույքի եւ բաց թողնված օգուտի արժեք, իսկ մյուս դիմումատուներից յուրաքանչյուրը պահանջել է 6 930 եվրո՝ որպես իրենց դադարեցված օգտագործման իրավունքի արժեք: Նրանք ոչ նյութական վնասի հարցը թողել են Դատարանի հայեցողությանը:

44. Կառավարությունը մեկնաբանություններ չի արել այդ պահանջների վերաբերյալ:

45. Դատարանը նշում է, որ այն նախկինում տրամադրել է նյութական վնասների փոխհատուցում համանման իրավիճակում (տե՛ս *Մինասյանը եւ Մեմերջյանն ընդդեմ Հայաստանի* (արդարացի փոխհատուցում), թիվ 27651/05, §§ 17-21, 2011 թվականի հունիսի 7), որը Դատարանն ամբողջությամբ կիրառելի է համարում սույն գործի նկատմամբ: Կիրառելով միեւնույն մոտեցումը եւ իր տրամադրության տակ եղած բոլոր նյութերի հիման վրա տալով գնահատական՝ Դատարանը կրած նյութական վնասը գնահատում է 30 000 եվրո եւ որոշում է կայացնում այդ գումարը բոլոր դիմումատուներին համատեղ տրամադրելու վերաբերյալ՝ միաժամանակ մերժելով նրանց պահանջի մնացած մասը, այդ թվում նաեւ բաց թողնված օգուտի մասով, որը ենթադրյալ բնույթ է կրում: Դատարանն այնուհետեւ որոշում է յուրաքանչյուր դիմումատուին տրամադրել 1 500 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի հատուցում:

Բ. Ծախսերը եւ ծախքերը

46. Առաջին դիմումատուն նաեւ պահանջել է 14 000 ՀՀ դրամ՝ ներպետական դատարաններում կրած ծախսերի եւ ծախքերի, մասնավորապես՝ դատական այն ծախսերի համար, որոնք պարտավոր է եղել կատարել:

47. Կառավարությունը մեկնաբանություններ չի արել այդ պահանջի մասով:

48. Դատարանի նախադեպային իրավունքին համապատասխան՝ դիմումատուն ունի ծախսերի ու ծախքերի փոխհատուցման իրավունք այնքանով, որքանով ցույց է տրվել, որ դրանք փաստացի կատարվել են եւ անհրաժեշտ են եղել, եւ դրանց չափը եղել է ողջամիտ: Սույն գործով հաշվի առնելով իր տրամադրության տակ եղած փաստաթղթերը եւ վերը նշված չափորոշիչները՝ Դատարանը ողջամիտ է համարում առաջին դիմումատուին շնորհել 30 եվրո՝ ներպետական վարույթում կրած ծախսերի ու ծախքերի դիմաց:

Գ. Չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը

49. Դատարանը գտնում է, որ չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը պետք է հիմնված լինի Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած՝ լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի վրա, որին պետք է գումարվի երեք տոկոսային կետ:

ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ ԴԱՏԱԴԱՆԸ ՄԻԱԶԱՅՆ՝

1. *Հայտարարում է* դիմումատուների՝ գույքից զրկելու վերաբերյալ բողոքն ընդունելի՝ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի համաձայն, իսկ գանգատի մնացած մասը՝ անընդունելի:

2. *Վճռում է*, որ տեղի է ունեցել Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում:

3. *Վճռում է, որ՝*

ա) պատասխանող պետությունը վճիռը Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան վերջնական դառնալու օրվանից երեք ամսվա ընթացքում պետք է վճարի հետեւյալ գումարները, որոնք պետք է փոխարկվեն պատասխանող պետության արժույթով՝ վճարման օրվա դրությամբ գործող փոխարժեքով:

i) բոլոր դիմումատուներին համատեղ՝ նյութական վնասի

դիմաց՝ 30 000 եվրո (երեսուն հազար եվրո)՝ գումարած գանձման ենթակա ցանկացած հարկ,

ii) յուրաքանչյուր դիմումատուին՝ ոչ նյութական վնասի դիմաց՝ 1 500 եվրո (հազար հինգ հարյուր եվրո)՝ գումարած գանձման ենթակա ցանկացած հարկ,

iii) դիմումատու Էմմա Թունյանին՝ ծախսերի եւ ծախքերի դիմաց՝ 30 եվրո (երեսուն եվրո)՝ գումարած նրանից գանձման ենթակա ցանկացած հարկ.

բ) վերը նշված եռամսյա ժամկետի ավարտից հետո՝ մինչեւ վճարման օրը, պետք է հաշվարկվի վերոնշյալ գումարների նկատմամբ պարզ տոկոսադրույք՝ չկատարման ժամանակահատվածում Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած՝ լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի չափով՝ գումարած երեք տոկոսային կետ.

4. *Մերժում է* դիմումատուների՝ արդարացի փոխհատուցման պահանջի մնացած մասը:

Կատարված է անգլերենով եւ գրավոր ծանուցվել է 2012 թվականի հոկտեմբերի 9-ին՝ համաձայն Դատարանի կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ եւ 3-րդ կետերի:

Սանտիագո Քեսադա

Ջուսեփ Կասադեւայ

Քարտուղար

Նախագահ